ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 26

«13» 03 2017 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԴՐԱ ՓՈՓՈԽՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ԼՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեության արդյունավետությունը բարձրացնելու և աշխատանքի հավասար ծանրաբեռնվածություն ապահովելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության դատախազության համակարգում դատախազների միջև աշխատանքային պարտականությունների բաշխում կատարելու մասին կարգադրությունների ներկայացման աշխատանքները կանոնակարգելու և միասնական չափորոշիչներ սահմանելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, 10-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 30-րդ հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության դատախազության համակարգում դատախազների միջև աշխատանքային պարտականությունների բաշխում կատարելու վերաբերյալ կարգադրության օրինակելի ձևը՝ համաձայն N 1 հավելվածի (կցվում է):

2. Սահմանել Հայաստանի Հանրապետության դատախազության համակարգում դատախազների միջև աշխատանքային պարտականությունների բաշխում կատարելու վերաբերյալ կարգադրության փոփոխման և (կամ) լրացման վերաբերյալ կարգադրության օրինակելի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի (կցվում է):

3. **Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին՝**

1) Համապատասխան ղեկավար դատախազների կողմից ներկայացրած առաջարկների հիման վրա, ըստ հանձնարարված ոլորտների, տալ Հայաստանի

Հանրապետության գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների և Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության, ինչպես նաև կայազորների զինվորական դատախազությունների դատախազների (այսուհետ՝ դատախազությունների դատախազներ) միջև աշխատանքային պարտականությունների բաշխում կատարելու վերաբերյալ կարգադրություններ:

2) Դատախազների միջև աշխատանքային պարտականությունների բաշխում կատարելու վերաբերյալ կարգադրության, ինչպես նաև դրա փոփոխման և (կամ) լրացման վերաբերյալ կարգադրության պատճենները տրամադրել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչությանը:

3) Սույն հրամանը ստանալուց հետո, տասնօրյա ժամկետում, նախկինում տրված կարգադրությունները համապատասխանեցնել սույն հրամանով սահմանված պահանջներին:

4. **Երևան քաղաքի և մարզերի դատախազներին՝**

1) Երևան քաղաքում համապատասխան ղեկավար դատախազների կողմից ներկայացրած առաջարկների հիման վրա, իսկ մարզերում՝ ըստ իրավասության սահմանների, տալ Հայաստանի Հանրապետության համապատասխան ստորաբաժանումների դատախազների (այսուհետ՝ դատախազությունների դատախազներ) միջև աշխատանքային պարտականությունների բաշխում կատարելու վերաբերյալ կարգադրություններ:

2) Աշխատանքային պարտականությունների բաշխում կատարելու վերաբերյալ կարգադրություններով, որպես կանոն, ապահովել դատախազությունների դատախազների մասնագիտացում՝ ըստ առանձին հանցատեսակների (Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հատուկ մասի բաժինների) և (կամ) գործունեության ուղղությունների, իսկ մարզերում՝ հաշվի առնելով նաև տարածքային քրեական հետապնդման մարմինների տեղակայումը՝ ապահովելով դատախազների հավասար ծանրաբեռնվածություն:

3) Ըստ առանձին հանցատեսակների մասնագիտացումն ապահովել հետևյալ ոլորտներով՝

- Մարդու և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործություններով (ՀՀ քրեական օրենսգրքի 7-րդ և 9-րդ բաժիններ)
- Սեփականության, տնտեսական գործունեության և շրջակա միջավայրի անվտանգության դեմ ուղղված հանցագործություններով (ՀՀ քրեական օրենսգրքի 8-րդ և 10-րդ բաժիններ)
- Պետական իշխանության դեմ ուղղված, կոռուպցիոն հանցագործություններով (ՀՀ քրեական օրենսգրքի 11-րդ բաժին և ՀՀ գլխավոր դատախազի 19.01.2017թ. թիվ 3 հրամանով սահմանված կոռուպցիոն հանցագործություններ)

Հանցագործությունների համակցության, ինչպես նաև քրեական գործերը միացնելու դեպքում՝ մասնագիտացումն ապահովել առավել ծանր հանցագործության նախապատվությամբ:

4) Դատախազների միջև աշխատանքային պարտականությունների բաշխում կատարելու վերաբերյալ կարգադրության, ինչպես նաև դրա փոփոխման և (կամ) լրացման վերաբերյալ կարգադրության պատճենները տրամադրել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչությանը:

5) Դատախազության նոր դատախազի նշանակման կամ երկարատև գործուղման (մեկ ամիս և ավելի ժամանակով) դեպքում, համապատասխան հրամանը ստանալուց հետո,

եռօրյա ժամկետում տալ դատախազների միջև աշխատանքային պարտականությունների բաշխման նոր կամ փոփոխման և (կամ) լրացման վերաբերյալ կարգադրություն:

6) Սույն հրամանը ստանալուց հետո, տասնօրյա ժամկետում, նախկինում տրված կարգադրությունները համապատասխանեցնել սույն հրամանով սահմանված պահանջներին:

5. **Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին՝**

1) Համապատասխան կարգադրություններ տալու համար վերադաս դատախազներին ներկայացնել առաջարկներ՝ դատախազությունների դատախազների միջև աշխատանքային պարտականությունների բաշխման վերաբերյալ:

2) Դատախազության նոր դատախազի նշանակման կամ երկարատև գործուղման (մեկ ամիս և ավելի ժամանակով) դեպքում, համապատասխան հրամանը ստանալուց հետո, եռօրյա ժամկետում, կարգադրություն տալու իրավասություն ունեցող վերադաս դատախազին ներկայացնել առաջարկ՝ դատախազների միջև աշխատանքային պարտականությունների բաշխման նոր կարգադրություն տալու կամ դրա փոփոխման և (կամ) լրացման վերաբերյալ:

6. Դատախազների միջև աշխատանքային պարտականությունների բաշխում կատարելու վերաբերյալ կարգադրությունն ամբողջությամբ ուժը կորցրած ճանաչելու և նոր կարգադրություն տալու կամ դրա փոփոխման և (կամ) լրացման վերաբերյալ կարգադրություն տալու նպատակահարմարությունը որոշում է կարգադրություն տվող վերադաս դատախազը:

7. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:

8. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի ղեկավարին:

Ա.Ս.ԴԱՎԹՅԱՆ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի
«13» 03 2017թ.
N 26 հրամանի

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N ....

_____ դատախազների
դատախազության (ստորաբաժանման) անվանումը

միջև աշխատանքային պարտականությունների բաշխում կատարելու և

_____ **կարգադրությունն ուժը կորցրած ճանաչելու մասին**
նախկին կարգադրությունը տված վերադաս դատախազի
պաշտոնը, կարգադրության ամսաթիվը և համարը

« » _____ 20____թ. ք. _____

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2017թ. մարտի ____-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության համակարգում դատախազների միջև աշխատանքային պարտականությունների բաշխում կատարելու վերաբերյալ կարգադրության, ինչպես նաև դրա փոփոխման և (կամ) լրացման վերաբերյալ կարգադրության օրինակելի ձևերը սահմանելու մասին» N ____ հրամանի համապատասխան պահանջները, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածով և 31-րդ հոդվածի 7-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1. Կատարել _____
դատախազության (ստորաբաժանման) անվանումը

դատախազների միջև աշխատանքային պարտականությունների հետևյալ բաշխումը.

1) _____
դատախազության (ստորաբաժանման) ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը

ա. _____
իրականացնում է .....

բ. _____
կազմակերպում է .....

գ. _____
կատարում է .....

2) _____

դատախազության (ստորաբաժանման) ղեկավարի տեղակալի պաշտոնը, անունը՝ ազգանունը

ա. _____

իրականացնում է .....

բ. _____

կազմակերպում է .....

գ. _____

կատարում է .....

3) _____

դատախազության (ստորաբաժանման) ավագ դատախազի պաշտոնը, անունը՝ ազգանունը

ա. _____

իրականացնում է .....

բ. _____

կազմակերպում է .....

գ. _____

կատարում է .....

4) _____

դատախազության (ստորաբաժանման) դատախազի պաշտոնը, անունը՝ ազգանունը

ա. _____

իրականացնում է .....

բ. _____

կազմակերպում է .....

գ. _____

կատարում է .....

2. Սույն կարգադրության պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն:

3. Ուժը կորցրած ճանաչել _____ կարգադրությունը:

նախկին կարգադրությունը տված վերադաս դատախազի պաշտոնը,

կարգադրության ամսաթիվը, ամբողջական վերնագիրը և համարը

4. Սույն կարգադրության կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:

_____ _

վերադաս դատախազի պաշտոնը

_____

ստորագրությունը, ազգանունը

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի
«13» 03 2017թ.
N 26 հրամանի

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N ....

_____ **կարգադրությունում փոփոխություն և (կամ) լրացում**

նախկին կարգադրությունը տված վերադաս դատախազի
պաշտոնը, կարգադրության ամսաթիվը և համարը

կատարելու մասին

« » _____ 20____թ. ք. _____

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2017թ. մարտի ____-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության համակարգում դատախազների միջև աշխատանքային պարտականությունների բաշխում կատարելու վերաբերյալ կարգադրության, ինչպես նաև դրա փոփոխման և (կամ) լրացման վերաբերյալ կարգադրության օրինակելի ձևերը սահմանելու մասին» N ____ հրամանի համապատասխան պահանջները, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածով և 31-րդ հոդվածի 7-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով՝

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ Ե Մ՝

1. _____ կարգադրությունում (այսուհետ՝

նախկին կարգադրությունը տված վերադաս դատախազի պաշտոնը,
կարգադրության ամսաթիվը, ամբողջական վերնագիրը և համարը

կարգադրություն) կատարել հետևյալ փոփոխությունը և (կամ) լրացումը.

1) Կարգադրության « _____ » բառերը

նշել կետը և ենթակետը, դատախազության (ստորաբաժանման) նախկին դատախազի պաշտոնը, անունը, ազգանունը

փոխարինել « _____ » բառերով:

նշել կետը և ենթակետը, դատախազության (ստորաբաժանման) նախկին դատախազի պաշտոնը, անունը՝ ազգանունը

2) Կարգադրության « _____ » հետո լրացնել նոր

նշել կետը և ենթակետը,

ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

« _____

նշել նոր կետի համարը, դատախազության (ստորաբաժանման) նոր դատախազի պաշտոնը, անունը՝ ազգանունը

ա. _____

իրականացնում է .....

բ. _____

կազմակերպում է .....

գ. _____

կատարում է .....

2. Սույն կարգադրության պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն:

3. Սույն կարգադրության կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:

---------- -

վերադաս դատախազի պաշտոնը

ստորագրությունը, ազգանունը